Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 11 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի շինարարության նախագծի փորձաքննություն» ծրագրերը.

Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագիրը.

Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից 2012-2014 թվականների ընթացքում իրականացվող ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի թիվ 1 մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի կենտրոնական պուրակի բարեկարգում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի բժշկական ամբուլատորիայի վերանորոգում», «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրերը.

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: